

ԶԲԱՂՍՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

<b>Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը</b>	«Էլեկտրասարքավորումների նորոգման և սպասարկման էլեկտրամոնտաժող»
<b>Դերը</b>	Էլեկտրամոնտաժողը կարող է իրականացնել հետևյալ զբաղմունքները. վերանորոգել, մոնտաժել և սպասարկել (մինչև 1000Վ) էլեկտրական հաղորդման գծերը, էլեկտրասարքավորումները, օդային և կաբելային գծերը, բաժանարար և թողարկա-կարգավորիչ սարքավորումները, էլեկտրական շարժիչները և տրանսֆորմատորները, կատարելով անհրաժեշտության դեպքում փականագործական աշխատանքներ:
<b>Խնդիրների բնագավառ 1.</b>	Բացահայտել էլեկտրասարքավորումների անսարքությունների և թերությունների պատճառները
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Էլեկտրամոնտաժողը էլեկտրասարքավորման տիպին և տեսակին համապատասխան ուրվագծում է անսարքությունների ենթադրվող պատճառները, դրանցից յուրաքանչյուրի հիմնավորման համար կատարում է անհրաժեշտ ստուգումները և մատնանշում անսարքության հիմնավոր պատճառը
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• սարքավորման տիպին և տեսակին համապատասխան նրա աշխատանքի առանցքային յուրահատկություններից առանձնացվում է,</li> <li>• սարքավորման տվյալ անսարքության հնարավոր պատճառների շրջանակը ուրվագծված է,</li> <li>• անսարքության իրական պատճառները անսխալ որոշված է:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 2.</b>	Պահպանելով սահմանված տեխնոլոգիան վերափոխել էլեկտրական սարքավորումների դետալները և հանգույցները
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Էլեկտրամոնտաժողը համաձայն կիրառվող տեխնոլոգիաների ապամոնտաժում և տարանջատում է շարքից դուրս եկած դետալները և հանգույցները, պահպանելով տեխնոլոգիական հաջորդականությունը և ռեժիմները տեղադրում է նորերը՝ կատարելով միջանկյալ չափումներ և ստուգումներ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• դետալների ապամոնտաժումը կատարվում է նրանց համար սահմանված ռեժիմներով,</li> <li>• դետալների ապամոնտաժումը կատարվում է պահպանելով աշխատանքների հաջորդականությունը,</li> <li>• դետալների ընտրության ժամանակ պահպանվել է նրանց, էլեկտրական բնութագրերի համատեղելիությունը,</li> <li>• դետալների տեղադրման աշխատանքների, հաջորդականությունը և ռեժիմները պահպանվում է,</li> <li>• դետալների տեղադրման ճշգրտության ստուգումները կատարվում է:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 3.</b>	Ստուգել և փորձարկել վերանորոգված սարքավորումների աշխատանքը
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Էլեկտրամոնտաժողը ստուգում է վերանորոգված սարքավորման աշխատանքը շահագործման բոլոր ռեժիմներում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• սարքավորումը շահագործման բոլոր ռեժիմներում նորմալ է աշխատում,</li> <li>• ռեժիմների փոփոխությունների ընթացքում աշխատանքի շեղումներ չեն առաջանում:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 4.</b>	Ապահովել աշխատանքի կազմակերպման ժամանակակից եղանակները էլեկտրական սարքավորումների վերանորոգման և շահագործման ժամանակ
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Էլեկտրամոնտաժողը տեղադրում և համալրում է տարբեր սարքերի հետ օգտագործվող էլեկտրական սարքավորումները, իրականացնում է վերանորոգման և շահագործման աշխատանքներ պահպանելով համապատասխան կանոնները: Ըստ անհրաժեշտության խորհրդատվություն է տրամադրում

<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Էլեկտրասարքավորումների և դրանց տեղադրման տեղի ճիշտ ընտրման գործում,</li> <li>• Էլեկտրասարքավորումների միացման ճիշտ կատարման գործում,</li> <li>• շահագործման տարբեր ռեժիմներում էլեկտրասարքավորումների աշխատանքի ճիշտ գնահատման գործում:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 5.</b>	Մինչև 1000 Վ լարման էլեկտրական օդային և մալուխային գծերի նորոգում, մոնտաժում և սպասարկում
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Էլեկտրամոնտաժողը իրականացնում է էլեկտրական օդային և մալուխային գծերի նորոգում, մոնտաժում և սպասարկում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• կատարված նորոգման և մոնտաժման աշխատանքների ստուգումը,</li> <li>• սպասարկման համար հրահանգավորման իրականացում:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 6.</b>	Հրահանգավորել շահագործողին նոր մոնտաժված, նորոգված էլեկտրական սարքավորման շահագործման պայմանների մասին
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Էլեկտրամոնտաժողը էլեկտրասարքավորումների շահագործողներին անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրում էլնելով տարբեր սարքերի պահպանման, շահագործման, սպասարկման հարցերի վերաբերյալ հրահանգներից
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• ըստ կոնկրետ պայմանների մշակված են հրահանգներ,</li> <li>• ըստ այդ հրահանգների շահագործողները ստացել են օբյեկտիվ խորհրդատվություն,</li> <li>• հրահանգումը նվազեցնում է սարքերի շարքից դուրս գալու հավանականությունը,</li> <li>• սարքերը անխափան շահագործվում են:</li> </ul>
<b>Պատասխանատվությունը</b>	<p>Էլեկտրամոնտաժողը պատասխանատու է</p> <ul style="list-style-type: none"> <li>• վերանորոգման աշխատանքները որակյալ կատարելու համար,</li> <li>• նյութերը խնայողաբար օգտագործելու համար,</li> <li>• ճիշտ խորհրդատվություն տրամադրելու համար,</li> <li>• աշխատանքների հետ կապված ծախսումները հաշվելու վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար ,</li> <li>• անսարքությունները ճիշտ որոշելու համար:</li> </ul>
<b>Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք</b>	
<b>Լեզուներ</b>	հայերեն - գերազանց մեկ օտար լեզու - բավարար
<b>Համակարգիչ</b>	MS Word - բավարար Internet Explorer` բավարար
<b>Գիտելիքները</b>	Էլեկտրատեխնիկայի հիմունքներ, ճարտարագիտական գրաֆիկա, վերանորոգման աշխատանքներում օգտագործվող նյութերի հատկությունները, էլեկտրասարքավորումների աշխատանքի սկզբունքները և աշխատանքային ռեժիմները, դետալների պարամետրերի բովանդակությունը
<b>Կարողությունները և հմտություններ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• անսարքությունների պատճառները բացահայտելու կարողություն,</li> <li>• անհրաժեշտ դետալները ընտրելու կարողություն,</li> <li>• սարքավորումներ օգտագործելու հմտություն,</li> <li>• տեղեկատու գրականությունից օգտվելու հմտություն,</li> <li>• գծագրերը և սխեմաները կարդալու հմտություն,</li> <li>• դետալները տեղադրելու և ապամոնտաժելու հմտություն,</li> <li>• սարքավորումների աշխատանքը կարգավորելու կարողություն:</li> </ul>
<b>Վերաբերմունքը</b>	Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, ճշտապահ, մաքրասեր, հումորի զգացում ունեցող, նորը ընկալող

ԱՐՀԵՍՏԱՎՈՐԻ «ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԷԼԵԿՏՐԱՍՈՆՏԱԺՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ  
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Արհեստավորի «Էլեկտրասարքավորումների նորոգման և սպասարկման էլեկտրամոնտաժող» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են.

1. պետական կրթական (որակավորման) չափորոշի բոլոր մոդուլների համապատասխան ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է համալիր թեսթային հարցման միջոցով: Թեսթը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող՝ ընդհանուր թվով 40 հարցից:

Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեսթային առաջադրանքի հարցերի առնվազն 95%-ին:

2. մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է կատարել հետևյալ գործողությունները՝

- Նախօրոք ընտրված, մինչև 1000Վ լարման, էլեկտրական սարքում, համալիր գնում և չափումների միջոցով ի հայտ բերել անսարքությունները, ապամոնտաժել, նորոգել, մոնտաժել, փորձարկել և հանձնել շահագործման ըստ սահմանված կարգի և ժամկետի:

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունների առնվազն 90%-ը կատարվել է չափորոշչով սահմանված՝ համապատասխան կատարման չափանիշներին համաձայն՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու հիգիենայի պահանջները: